Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 317-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2021 օգոստոսի 18-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՈՍԿՈՒ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

	Ընդհանուր դրույթներ			
1.	Վարկատեսակ	«Ոսկի ստանդարտ»		
2.	Նպատակ	այլ		
3.	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար		
4.	Նվազագույն գումար	30 000 ՀՀ դրամ կամ 60 ԱՄՆ դոլար		
5.	Առավելագույն գումար	30 000 000 ՀՀ դրամ կամ 60 000 ԱՄՆ դոլար, կամ		
6.	Տրամադրման եղանակ	ՀՀ դրամ՝ կանխիկ եղանակով ԱՄՆ դոլար՝ անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով (քարտային վարկ)		
7.	Տարբերակ 1			
7.1	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	ՀՀ դրամ՝	95%, եթե վարկառուն համապատասխանում է 9.1 կետում սահմանված պահանջներին	
			100%, եթե վարկառուն համապատասխանում է 9.2 կետում սահմանված պահանջներին	
		ԱՄՆ դոլար՝	90%	
7.2	Վարկի և տոկոսագումարների մարման ձև	տոկոսագումարը վարկը վերցնելու պահին, իսկ մայր գումարը՝ ժամկետի վերջում (դիսկոնտ)		
7.3	Ժամկետը		92-ից 93-րդ օրը ներառյալ	181-ից 183-րդ օրը ներառյալ

:

7.4	Տարեկան անվանական տոկոսադրույք (ըստ արժույթի և ժամկետի)	ՀՀ դրամ՝	11%	14%
		տոկոսադրույքը կարող է սահմանվել 0.5%-ով ցածր ՀՀ դրամով վարկերի սահմանված տոկոսադրույքից, եթե վարկը ձևակերպվում է 95% վարկ/գրավ հարաբերակցությամբ, սակայն վարկառուն բավարարում է 9.2 կետում սահմանված պահանջներին		
		ԱՄՆ դոլար՝	8%	10%
7.5	Տարեկան փաստացի տոկոսադրույք[1]	ՀՀ դրամ՝	20. 85% - 21.49%	20. 10% - 20. 76%
		ԱՄՆ դոլար՝	17.74%	15.62%
7.6	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճարը վարկի տրամադրման պահին (վարկի պայմանագրային գումարից)	2%		
7.7	Վարկային հաշվի ամսական սպասարկման վճարը	չի սահմանվում		
8.	***<u>Տարբերակ 2</u>***			
8.1	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	ՀՀ դրամ	95%, եթե վարկառուն համապատասխանում է 9.1 կետում սահմանված պահանջներին	
			100%, եթե վարկառուն համապատասխանում է 9.2 կետում սահմանված պահանջներին	
		ԱՄՆ դոլար	90%	
8.2	Վարկի և տոկոսագումարների մարման ձևը	տոկոսագումարը յուրաքանչյուր ամիս, իսկ մայր գումարը ժամկետի վերջում (արտոնյալ հավասարաչափ)		ամսական հավասարաչափ մասերով (անուիտետ)
8.3	Ժամկետը	122-ից 180-րդ օրը ներառյալ		365-ից 1095-րդ օրը ներառյալ
8.4		ՀՀ դրամ	18%	19%

[1] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

:

	Տարեկան անվանական տոկոսադրույք	տոկոսադրույքը կարող է սահմանվել 0.5%-ով ցածր ՀՀ դրամով վարկերի սահմանված տոկոսադրույքից, եթե վարկը ձևակերպվում է 95% վարկ/գրավ հարաբերակցությամբ, սակայն վարկառուն բավարարում է 9.2 կետում սահմանված պահանջներին		
		ԱՄՆ դոլար	14%	14%
8.5	Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	21.48% - 23.31%	21.02% - 23.08%
		ԱՄՆ դոլար	15.65%-15.99%	15.74% - 17.14%
8.6	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար՝ վարկի տրամադրման պահին (վարկի պայմանագրային գումարից)*	ՀՀ դրամ	1%	
		ԱՄՆ դոլար	0.3%	1%
	*Ոսկու առևտրով և/կամ արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց վարկավորելու դեպքում՝ 0 ՀՀ դրամ: Այլ Բանկերից կամ ֆինանսական կազմակերպություններից ոսկու գրավով վարկերի տեղափոխման դեպքում՝ 0 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ներկայացնում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա վաղեմության վարկի մարման անդորրագիր:			
8.7	Վարկային հաշվի ամսական սպասարկման վճարը	չի սահմանվում		
8.8	Վարկի մարման արտոնյալ ժամանակահատված**	ՀՀ դրամ	չի սահմանվում	վարկի մարման առաջին 6 ամիսներին՝ իրականացվում են միայն վարկի տոկոսագումարների մարումներ,
		ԱՄՆ դոլար		վարկի մարման առաջին 12 ամիսներին՝ իրականացվում են միայն վարկի տոկոսագումարների մարումներ,
	**Վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածից օգտվելու դեպքում վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է տվյալ տարբերակում գործող տոկոսադրույք +1%			

Տարբերակ 3

Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	չի սահմանափակվում
Վարկի առավելագույն սահմանաչափ	Հաճախորդին տրամադրվում է գրավի գնահատված արժեքի 100%-ի և Բանկի ներքին գնահատման արդյունքում հաճախորդին հասանելիք գումարի (առավելագույնը 5 մլն ՀՀ դրամ) հանրագումարը:
Վարկի և տոկոսագումարների մարման ձևը	ամսական հավասարաչափ մասերով (անուիտետ)
Ժամկետը	365-ից 1095-րդ օրը ներառյալ

:

Տարեկան անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամ	19.5%
	ԱՄՆ դոլար	14.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	22.22% -23.69%
	ԱՄՆ դոլար	16.32%-17.72%
Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար՝ վարկի տրամադրման պահին (վարկի պայմանագրային գումարից) ***	1%	
***Ոսկու առևտրով և/կամ արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց վարկավորելու դեպքում՝ 0 ՀՀ դրամ: Այլ Բանկերից կամ ֆինանսական կազմակերպություններից ոսկու գրավով վարկերի տեղափոխման դեպքում՝ 0 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ներկայացնում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա վաղեմության վարկի մարման անդորրագիր:		
Վարկային հաշվի ամսական սպասարկման վճարը	չի սահմանվում	
Վարկառուին ներկայացվող պահանջները	համաձայն բանկի ներքին գնահատման համակարգի	
Վարկառու		
9. Վարկառուին ներկայացվող պահանջները	9.1	95% վարկ/գրավ հարաբերակցության դեպքում ➢ ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի տրամադրման օրվա դրությամբ չպետք է ցածր լինի 18 տարեկանից և վարկը մարելու պահին չպետք է գերազանցի 70 տարեկանը, ➢ Վարկի տրամադրման պահին վարկառուն չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություն, ➢ Վարկի տրամադրման պահին նախորդող 6 ամսվա ընթացքում վարկառուն չպետք է ունենա «հսկվող» դասից առավել խիստ դասակարգված վարկ

:

		9.2	100% վարկ/գրավ հարաբերակցության դեպքում ➢ ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի տրամադրման օրվա դրությամբ չպետք է ցածր լինի 18 տարեկանից և վարկը մարելու պահին չպետք է գերազանցի 70 տարեկանը, ➢ Վարկի տրամադրման պահին վարկառուն չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություն, ➢ վարկի տրամադրման պահին նախորդող 12 ամսվա ընթացքում վարկառուն չպետք է ունենա «հսկվող» դասից առավել խիստ դասակարգված վարկ ➢ վարկի տրամադրման պահին նախորդող 12 ամիսների ընթացքում վարկառուի նախկինում ստացված վարկերի (վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) գծով վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարների մարումների ուշացած օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 60 օրը ➢ վարկառուն պետք է ունենա նվազագույնը 6 ամսվա վարկային պատմություն
Վճարային քարտի պայմաններ			
10.	Քարտի տեսակը		ARCA CLASSIC
11.	Քարտային հաշվից կանխիկացման վճարը		չի գանձվում
12.	Քարտի տարեկան սպասարկման վճար		չի գանձվում
13.	Քարտի սպասարկման այլ սակագները		համաձայն Բանկում գործող տվյալ քարտի սակագների՝ հետևյալ հղմամբ՝ ArCa Classic քարտերի տեղեկատվական ամփոփագիր
ՏՈՒՅԺԵՐ , ՏՈՒԳԱՆՔՆԵՐ			
14.	Ժամկետանց վարկի գծով՝ օրական		0.10%
15.	Ժամկետանց տոկոսագումարի գծով՝ օրական		0.10%
16.	Վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում		չի սահմանվում
Գրավի առարկային ներկայացվող պահանջներ			
17.	✓ գրավի առարկա կարող են հանդիսանալ ոսկու ստանդարտացված ձուլակտորներ, ոսկյա զարդեր, ոսկու ջարդոն:		
	✓ գրավի առարկա չեն կարող հանդիսանալ սպիտակ ոսկին, զարդեր, որի կազմում սպիտակ ոսկին կազմում է 30 և ավելի տոկոս, կամ հնարավոր չէ զարդը գնահատել առանց սպիտակ ոսկու մասը կազմող կշռի,		

:

	✓ ոսկյա իրերի գեղարվեստական արժեքների, ոսկյա իրերին ամրացված թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի դիմաց վարկավորում չի իրականացվում	
18.	Գրավի առարկայի գնահատումն իրականացվում է ոսկերիչ-փորձագետի կողմից՝ Բանկում տվյալ օրվա դրությամբ գործող սակագներով:	
Պահանջվող փաստաթղթերը և տեղեկատվություն		
19.	1) անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ)	
	2) սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (առկայության դեպքում) (բնօրինակ)	
	3) ոսկու առևտրով և/կամ արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձինք, որպես գործունեության ծավալման հիմք ֆիզիկական անձը ներկայացնում է գործունեության ծավալման վայրի վարձակալության պայմանագիրը (նոտարական վավերացումը պարտադիր չէ):	
	4) Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցե	
Այլ պայմաններ		
20.	Վարկի տրամադրման դրական գործոնները	Բանկի վարկավորման պայմաններին համապատասխանությունը
21.	Վարկի մերժման գործոնները	1) վարկի տրամադրման պահին ժամկետանց վարկային պարտավորությունների առկայությունը
		2) պահանջվող փաստաթղթերը չներկայացնելը,
		3) անձի կամ անձը հաստատող փաստաթղթի նկատմամբ կասկածները,
		4) գրավի առարկայի իսկության ստուգման ընթացքում հարգի վերաբերյալ կասկածները, կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության կամ կեղծ փաստաթղթերի ներկայացումը,
		5) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվության առկայությունը, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից Բանկին տրամադրված/հայտարարված տեղեկությունները,
		6) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվության առկայություն, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը,
		7) հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայությունը
22.	Որոշման կայացման առավելագույն ժամկետը	վարկային հայտի ներկայացման օրը
23.	Հաճախորդին որոշման մասին տեղեկացման ժամկետը	վարկային հայտի ներկայացման օրը
24.	Վարկի տրամադրման ժամկետը	վարկային հայտի ներկայացման օրը

:

25.	Վարկի դիմումի ընդունման վայրը	Բանկի բոլոր մասնաճյուղերը, բացառությամբ «Վարդանանց» և «Կենտրոն» մասնաճյուղերի
26.	Վարկի ձևակերպման և տրամադրման վայրը	Բանկի բոլոր մասնաճյուղերը, բացառությամբ «Վարդանանց» և «Կենտրոն» մասնաճյուղերի
Ոսկու գրավով քարտային վարկերի դեպքում հաճախորդին չի տրամադրվում վճարային քարտ, եթե հաճախորդը տվյալ պրոդուկտի շրջանակներում ունի գործող վճարային քարտ:		
Վարկն ամբողջությամբ մարելուց հետո, գրավի առարկան վերադարձվում է գրավատուին մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե վարկն ամբողջությամբ մարելուց հետո, հաճախորդը չի ներկայանում գրավադրված ոսկյա իրերը ստանալու համար, ապա 30-րդ օրվանից սկսած յուրաքանչյուր օրվա համար գանձվում է 100 ՀՀ դրամ միջնորդավճար:		

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

2. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

8. Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

9. Վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:

:

10. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

11. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

12. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

13. Վարկառուն կարող է զրկվել գույքի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

14. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

15. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

16. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58-24-21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

17. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

18. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

19. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

20. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

21. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

:

22. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և Idram&IDBank բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

: